ԳԵՎՈՐԳ ՉԱՌԻՇ

Ս. Կ. ՊՈՂՈՍՅԱՆ

Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ կիրառված քաղաքականությունն այլ բան չէր, եթե ոչ ցեղասպանություն, որն իրականացվում էր քաղաքական անլուր հետապնդումների, տնտեսական հրեշավոր շահագործման ու քայքայման և ֆիզիկական բնաջնջման միջոցով[1]։ 1888 թ. նոյեմբերին «Հնչակը» գրեց. «Ներկայիս Հայաստանում հայ ժողովրդի դրությունը քաղաքականապես և տնտեսապես հանդիսանում է իբրև ստրկական կացության կերպերի մի շղթայակապ զանգված։

Տնտեսապես՝ ժողովուրդը ծանրաբեռնված է ուղղակի և անուղղակի բազմաթիվ և ահագին հարկերով, որոնք կրկնապատկվում, եռապատկվում են... ժողովրդի հողը շարունակաբար բռնի կերպով հափշտակվում է... այդպիսի պայմանների թակարդում բանտարկված ու շղթայված ժողովուրդն աշխատում ու բանում է բացառապես կառավարությանն ու շահամոլ դասակարգերին կերակրելու համար։

Քաղաքականապես՝ նա լիովին իրավազուրկ է։ Դատապարտված ստրկական լռության, հլու հնազանդության, անիրավ՝ իբրև վկա դատարանում, մեղավոր՝ երբ իրեն սպանելիս պաշտպանվում է, հանցավոր՝ եթե հառաչում ու լալիս է իր թշվառ դրության վրա, կրոնով հալածված, կայքն ու կյանքը անապահով, վայրենի ցեղերի ավերիչ ու անարգել հարձակումներին ենթակա և այդ բոլորի հետևանքով հասած քաղաքական ու ֆիզեկական քայքայման ու նյութական աղքատության»[2]։

Բացի դա, 1840—50-ական թվականներին սկսեց ձևավորվել և Բեռլինի կոնգրեսից հետո պետական քաղաքականություն դառնալ հայերի ֆիզիկական բնաջնջման պանօսմանական գաղափարաբանությունը։ Եվ պատահական չէ, որ հայերը դիմադրավում էին օսմանյան բիրտ վարչակարգի բնաջնջող քաղաքականությանը։ «Քանի որ գործն այս դրության մեջ էր,— գրում է Բաֆֆին,— քանի որ թուրքաց հայերին սպառնում է մի օրհասական հարված, որ հավիտյան վերջ պիտի դնե նրանց գոյությանը... Թուրքաց հայերին ոչինչ չի մնում, բացի նրանից, որ իրենք հոգ տանեն իրենց անձնապաշտպանության համար, եթե չեն ցանկանում իսպառ ոչնչանալ և ջնջվել աշխարհի երեսից»[3]։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի բոլոր ուղղությունների վրա իր կնիքն էր դրել հենց այս հանգամանքը, այսինքն բնաջնջման վտանգի դեմ պայքարը՝ ինքնապաշտպանությունը։ Ճիշտ է, արևմտահայ հասարակական-քաղաքական ամեն մի հոսանք ինքնապաշտպանությունը յուրովի էր հասկանում և տարբեր ձևերով ու մեթոդներով էր ձգտում իրականացնել, բայց բնորոշը մեկն էր՝ պայքարի այդ բոլոր ձևերն ու մեթոդները նման էին խեղդվողի ճիչի, հեռանկարից զուրկ խաբկանքի, գիշատչի ճիրաններում հոշոտվողի թալկացած ընդվզման։

Թուրքական յաթաղանի դեմ արևմտահայության ինքնապաշտպանական պայքարում մեծ տեղ է գրավում հայդուկային շարժումը։ Այն, ի տարբերություն հայ ազգային կուսակցությունների, չուներ որոշակի հեռանկար նա-

---

1 Архив внешней политики России, ф. «Посольство в Константинополе», д. 3796, л. 47.

2 *Հնչակ, 1888, № 11—12։*

3 *Մշակ, 1879, № 191։*

խատեսող քաղաքական ծրագիր։ Հայդուկները վրեժխնդիր էին լինում հայ ժողովրդի նկատմամբ գործադրված վայրագությունների համար և իրենց պայքարով վառ էին պահում նրա ազատատենչ ոգու կրակը։

Տարոնում հայդուկային շարժման հիմնադիրը, հայդուկային առաջին ջոկատի կազմակերպիչն ու ղեկավարը Արաբոն էր։ Այս անդրանիկ խմբի կազմում մարտական մկրտություն ստացան ու թրծվեցին հայդուկային շարժման մի քանի աչքի ընկնող ղեկավարներ[4]։ Այստեղ հայդուկի իր կենսագրությունը սկսեց Մըկթենքցի Գևորգը՝ Գևորգ Չաուշը։

Գևորգն առանձնահատուկ տեղ ունի հայդուկային շարժման մեջ։ Պատմության հոգացողությամբ Գևորգի հայդուկային կյանքը համընկավ այդ շարժման վերելքի հետ, իսկ այդ կյանքի ավարտը նշանակեց Սասունի հայդուկային շարժման անկում։ Այլ կերպ ասած, Գևորգի ֆիդայական կյանքը Սասունի հայդուկային շարժման ամբողջական պատմության (1888—1907) արտահայտությունն էր։

Գևորգի գործունեության մասին զգալի քանակությամբ վավերագրեր, վկայություններ ու գրքեր կան։ Նրա մասին նյութերի կարելի է հանդիպել ժամանակի պարբերական մամուլում («Մշակ», «Հնչակ», «Մուրճ», «Դրոշակ» և այլն), ինչպես նաև Անդրանիկի, Սմբատի, Ռուբենի, Մուրադի և շատ ուրիշների հուշագրություններում։ Գևորգին են նվիրված Կ. Սասունու, Ա. Ա-Դոյի և Ավոյի մենագրությունները։ Սակայն նրա կյանքն ու գործունեությունը դեռևս գիտական լուրջ ուսումնասիրության չի արժանացել։ Ինչ վերաբերում է խորհրդահայ պատմագիտությանը, ապա տասնամյակներ շարունակ հայդուկային շարժումը նրա համար եղել է «փակ թեմա», մատնված քարլռության։ Այդ քարլռության առաջին խախտողներն եղան հայ գրականության երկու նշանավոր դեմքերը՝ Խաչիկ Դաշտենցն ու Մուշեղ Գալշոյանը։ Սակայն նրանք միայն դուռ բացեցին և այն սպասում է մեր պատմաբանների մուտքին։

Այսօր արդեն ակնհայտ է, որ առանց հայդուկային շարժման անհնար է ներկայացնել թուրքական բռնակալության բնաջնջման քաղաքականության դեմ հայ ժողովրդի պայքարի ամբողջական պատկերն ու բնույթը։ Պատմաբանների համար այստեղ իսկապես աշխատանքի լայնածավալ ասպարեզ կա։ Մեզ հայտնի չեն հայդուկության շատ ղեկավարների նույնիսկ կենսագրական տվյալները։ Օրինակ, չգիտենք Գևորգի ազգանունը։ Որոշ գրվածքներում նշվում են Ադամյան, Մելքոնյան, իսկ մյուսներում՝ Ղազարյան ազգանունները։ Ո՞րն է ճիշտը։ Մենք հակված ենք ճիշտ համարելու Ղազարյան ազգանունը, որովհետև հայտնի է, որ Գևորգը ծնվել է Բսանքի գավառակի Մըկթենք գյուղի Ղզրոյենց գերդաստանում, իսկ Սասունում գերդաստանի անունը միաժամանակ նրա շառավիղների ազգանունն էր։

Ո՞րն է Գևորգի ծննդյան թվականը։ Հիմնականում նշվում է 1870 թ.։ Գրականության մեջ կարելի է հանդիպել նաև 1869 և 1871 թվերին։

Հայտնի է, որ Գևորգը Առաքելոց վանքի դպրոց ընդունվեց 16 տարեկան հասակում և այնտեղ մնաց երկու տարի։ Գևորգը պատմում է. «Մնացի այնտեղ (Առաքելոց վանքում— Ս. Պ.) երկու տարի, սակայն այնտեղ կիմանայի և կզգայի հայություն կար, մանավանդ Արաբոն ու Լևոնը կային։ Երբեմն կհանդիպեի վանքը, իրենց համար ծառայություն կընեի և այնտեղէն գինովցա։ 1888 թ. մայիս ամսի 7-ին հրաժարվեցի վանքից, գնացի տուն, բայց շարունակ գործ ունեի զենքի հետ... բոլոր գերդաստանով ինձ սիրում էին, որովհետև այբուբեն գիտեի, իսկ տերտերը (Գևորգի հորեղբայրը— Ս. Պ.) շատ կը բարկանար ու կը նախատեր զիս. կըսեր, թե զենքի հետը գործ չունիս, փորձն Ավետարան, Մաշտոց և շարական կարդալ. բայց ես ոչ ոքի չէի լսեր, ոչ ոքի ալ չէի հնազանդվեր... թողի հեռացա գյուղես, կրկին վերադարձա Առաքելոց վանք, որպեսզի ընկերանամ Արաբոյին և Լևոնին»[5]։

4 Հնչակ, 1894, № 14։

5 Ավ ո, Գևորգ Չաուշ, Պեյրութ, 1972, էջ 23—24։

Մըկթենքն ուներ 25 տուն՝ մոտ 300 բնակիչով։ «Բսանաց գավառի այս գյուղն էր Բերմի հետ, որ սնուցել է Սասնո հայտնի կտրիճներին և օրորել այն քաջարի ասպետների խանձարուրը», որոնց քաջագործությունները հայտնի էին ամբողջ Սասունում։ Մըկթենքցիները «վարպետ և անվեհեր որսորդներ էին։ Ոչ մի քնքշություն, ոչ մի մեղմություն, բնության ոչ մի թեթև նազանք ժայռերի սուր կատարների վրայից»[6], և որը բնորոշ էր նաև նրա մարդկանց կերպարին ու բնավորությանը։ Գևորգի մայրը՝ Ռեհանը, «զբաղմ կին էր», համարձակ ու անվախ մի գեղջկուհի։ Հայրը՝ Արոն, համբավավոր որսորդ էր, բայց երիտասարդ հասակում կուրացել էր։ «Գևորգին էր ուրեմն մնում սպանելու սարի ձանձրույթը, հոր հրացանը շալակել ու թափառել մացառների մեջ, ապառաժների վրա և որսալ՝ ինչ որ հանդիպեր։ Առավոտյան վաղ տնից դուրս էր գալիս և երեկոյան մթին վերադառնում»։ Նա գյուղի երիտասարդներից մարտական խումբ կազմակերպեց ու զբաղվում էր զինավարժություններով։ «Բայց հազիվ մի տարի է տևում այս ազատ, ինքնիշխան կյանքը... Մի երեկո տուն վերադառնալիս զայրացած հայրը արգելեց այլևս իր հրացանը օգտագործել։

— Վա, այդպե՞ս, հա,— ասաց Գևորգը,— թող այս օջախը ինձ հարամ լինի, մինչև որ ինձ համար հրացան չգտնեմ»[7]։ Նա նորից վերադառնում է Առաքելոց վանք։ Այս վերադառնալն էլ որոշում է Գևորգի կյանքի ուղին. նա ընդունվում է Արաբոյի խմբի մեջ ու մասնակցում նրա մարտական գործողություններին[8]։

Ալիզանի գյուղապետ Կրպոյի մատնությամբ Արաբոն ու Մխոն ձերբակալվում են։ Գևորգը և ահրոնքցի Ադամը հանձնարարություն են ստանում պատժել դավաճանին, և Գևորգը ատրճանակի երկու կրակոցով փակում է նրա հաշիվը[9]։

Դա 1889 թիվն էր։ Տարոնն ու Սասունը եռում էին։ Քուրդ ավազակապետ Մուսա բեկի գազանությունները լցրել էին մշեցիների ու սասունցիների համբերության բաժակը, մանավանդ, երբ նա փախցրեց Տարոնի Խարսի գյուղապետ Միրոյի դստերը՝ Գյուլիզարին։ Սուլթանի հանձնարարությամբ Կ. Պոլսում դատական ֆարս է կազմակերպվում և Մուսա բեկն արդարացվում է[10]։ Սուլթանի ու նրա կառավարության կողմնակալ, նենգ քաղաքականությունը հայերին մեկ անգամ ևս համոզեց, որ նրանք դիվային, հայաջինջ նպատակներ են հետապնդում, և փրկության միայն մեկ ուղի կա՝ ընդդիմանալ ու զենքի միջոցով հաստատել իրենց ապրելու իրավունքը։ Ահա այս մթնոլորտում Գևորգի մեջ միտք է հղանում մեկնել Հալեպ, փող վաստակել ու հրացան գնել։ 1889 թ. սեպտեմբերին նա և Գալշոյի Մանուկը մեկնում են Հալեպ։ Այնտեղ արտագնա աշխատանքի գնացած սասունցիների օգնությամբ նրանց հաջողվում է զենք գնել ու վերադառնալ Սասուն[11]։ Դա 1890 թ. գարունն էր, որ «բացում էր հայկական հեղափոխության արյունոտ շրջանը և դեռ հեղափոխական առաջին քարոզիչները Սասունի լանջերին չէին երևացել, իսկ Գևորգն արդեն ինքնաբերաբար, իրավիճակի թելադրանքով, ըմբոստացած շրջապատող պայմանների դեմ՝ գյուղացի երիտասարդությանը կոչ էր անում «ոչ խարճ, ոչ էլ խարաճ տալ կառավարությանը»։ Ու երբ Մ. Տամատյանը Սասուն ոտք դրեց, Գևորգը եղավ նրա առաջին ընկերը, նրա վստահելի ու ամենաանխոնջ գործակիցը, ինչպես նաև տեղական պայմաններին ավելի ծանոթ և իրազեկ ուղեցույցը[12]։

---

6 Դրոշակ, 1907, № 8։

7 Ավ., նշվ. աշխ., էջ 24։

8 1915—1965. Յուշամատեան մեծ եղեռնի, Պեյրութ, 1965, էջ 424։

9 Կ. Սասունի, Սարերու Ասլանը, Պեյրութ, 1966, էջ 62։

10 Կուլիզար, Փարիզ, 1946։

11 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 84։

12 Դրոշակ, 1907, № 8։

Հարկ է նշել, որ Գևորգի քաղաքական հայացքների ձևավորման վրա վիթխարի ազդեցություն են ունեցել Արմենակ Ղազարյանը (Գժոխք Հրայրը), Մ. Տամատյանը և Հ. Պոյաճյանը (Մուրադը), որոնց հետ մտնելով սերտ հարաբերություններ, մասնակցել քաղաքական ու մարտական բազմաթիվ գործողությունների։ Սակայն Գևորգի համար իսկական մարտական մկրտություն դարձան ու նրա վարքագիծը ձևավորեցին Սասունի 1890—1894 թթ. ինքնապաշտպանական կռիվները։

Սկսած 1891 թ. դեկտեմբերից Տարոնում ու Սասունում արտակարգ խրստություններ մտցվեցին։ Իշխանությունների ջանքերով ստեղծվեց «պատերազմական դրություն... ամբողջ Հայաստանում և հատկապես Տարոնում»[13]։ Սուլթանը հրամայել էր «հայերին արմատից պոկել»[14]։ «Առանց խտրության սեռի ու հասակի բոլորը ձերբակալվում են, մեղավոր, թե անմեղ՝ դա կառավարությանն այլևս չի հետաքրքրում, տեղի ունի զորքերի ընդհանուր զորահավաք... միայն Սասունի վրա մի քանի վաշտ զորքի հետ ուղարկվել է 16 մեծ դաշտային և 34 լեռնային թնդանոթ»[15]։ «Հնչակի» վկայությամբ «Սուլթանի անունից մեծ խոստումներ տալով... քուրդ ցեղերին հորդորեցին «իրենց անելիքը» կատարել հայերի դեմ և այդ նպատակով նրանց բաժանված է բոլոր տեսակի զենքեր և ռազմական այլ պաշարներ։ Հայաստանի բոլոր կողմերում տեղական կառավարություններն ամենաժրաջան պատրաստություններն էին տեսնում, կարծես, պատերազմի համար»[16]։ Թշնամին բոլոր ուղղություններով շարժվում է Սասունի վրա և այն առնում շրջափակման մեջ[17]։ Թուրքական ու քրդական այդ բազմահազար ուժերի դեմ կանգնած էին 2000 գյուղացի, զինված միայն չախմախլի հրացաններով, դաշույններով ու մահակներով։

Գևորգն արդեն հայտնի անուն էր ոչ միայն հայերի, այլև թուրքերի ու քրդերի շրջանում։ Նրա ջոկատի արագ տեղափոխությունները սանձում էին քրդական աշիրեթներին և առժամանակ ապահովում հայերի թիկունքի անվտանգությունը։ «1892 թվականին՝ հակառակ իր փոքր տարիքին (Գևորգը) Հրայրի հետ մասնակցելով Տալվորիկի մեծ կռվին և, այնպիսի եզակի քաջություն ցույց տվավ, որ զարմանք և հիացում պատճառեց փորձառու ֆիդայիներուն»,— գրել է Մ. Ավետյանը[18]։

1893 թ. գարնանը սկսվեց թուրքական բանակի նոր առաջխաղացումը դեպի Վերին Սասուն, որին մասնակցում էին նաև տասնյակ հազարավոր քոչվորներ և բազմաթիվ մոլեռանդ շեյխեր՝ սրբազան պատերազմի կոչող իրենց ոռնոցներով։ Սասունը նորից պաշարվեց։ Այդ ընթացքում Սեմալ գյուղում ձերբակալվեց Մ. Տամատյանը։ «Գևորգ իր ֆիդայիներով Տալվորիկեն Սեմալ իջավ զայն ազատելու համար։ Բայց ուշ էր արդեն, ան տարված էր Մուշ։

Գևորգը Տամատյանի բացակայությունը զգացնել չտվավ, ինք անձամբ ստանձնելով անոր գործը»[19]։ Նույն ժամանակ օգնություն բերելու հույսով Կովկաս մեկնեց Հրայրը, իսկ Հ. Պոյաճյանը Սասուն բարձրացավ։ «Գևորգ այս անգամ միանալով այս վերջինին, սկսան միասնաբար շարունակել հեղափոխական գործը»[20]։

Թուրքական հրամանատարությունն այս անգամ ձգտում էր Սասունն ընկճել և նրա հայ բնակչությանը կոտորել քրդերի միջոցով։ Դրանով նա, մի կողմից կխնայեր իր բանակի ուժերը, իսկ մյուս կողմից, ձեռքերը չոր դուրս

13 Հնչակ, 1892, № 6։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում։
17 Հ. Պողոսյան, Սասունի պատմությունը, Երևան, 1985, էջ 187։
18 Մ. Ավետեան, Հուշամատեան և զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 121։
19 Նույն տեղում, էջ 121։
20 Նույն տեղում։

կգար սպանդից՝ ի լուր աշխարհի հայտարարելով, որ թուրքական կառավարությունը մեղսակից չէ հայերի ջարդերին։

Հայերը հարկադրված էին կռվել մի քանի ճակատով։ Սակայն հարվածի գլխավոր ուղղությունը Տալվորիկն էր, որի գրավումը ճամփա կբացեր դեպի Անդոկ և Շատախ։ Տալվորիկում «Գևորգը Փրխվայի տեր-Գաբրիել քահանայի հետ կռնակ-կռնակի հերոսաբար շարունակեցին դիմադրությունը և խլեցին հաղթության փառքը»[21]։ Երբ քրդերի պարտության լուրը Կ. Պոլիս հասավ, սուլթանը կատաղեց ու վճռեց՝ «Պետք է բնաջնջել Սասունը»։ Զեքի փաշան սուլթանի հանձնարարությունը իր համար մեծ պատիվ համարեց և անմիջապես հրավիրեց քուրդ ցեղապետերի ժողով ու նրանց տեղյակ պահեց, որ հայերին ոչնչացնելու համար սուլթանը պարգևատրություններ է խոստանում։

Հուլիսի 17-ին սկսվեց մի ահեղ կռիվ։ Մեկ հայի դեմ կանգնած էր 40—50 քուրդ, բայց «քաջ սասունցիք իրար ձայն տալով ու քաջալերելով գնդակներ էին թափում կարկուտի նման, հրացանների ամպեր էին ձևավորում, որոտմունքը ականջներ էր խլացնում, քրդերն իրար վրա էին գլորվում, դիակները դիաթավալ խաղում էին...»[22]։ Մարտերը շարունակվեցին մինչև ուշ երեկո։ Երբ մութն ընկավ, քրդերն իրենց զոհվածների դիակները հավաքելով հեռացան։ Դա հայերի փայլուն հաղթանակն էր։ Գևորգը գրում է. «Հուլիսի 17-ին Տալվորիկի մեջ տեղի ունեցավ մի մեծ կռիվ։ Ինձ հետ էին Արմենակը, Ադամը, Պողոսը և Հովհաննեսը։ Կանոնավոր զենք չունեինք, մեկ հատ մարտին իմ ձեռքին կար, մյուսները չախմախլի էին։ Այնտեղ մենք կորցրինք հինգ ընկերներ և մի կին, իսկ քրդերից սպանվեց 30 հոգի»[23]։

Եկավ 1894 թվականը։ Գարունը դեռ նոր էր բացվել և «աներևակայելի արագությամբ բոլոր շրջակա կուսակալություններից զորքեր մեկնեցին դեպի Մուշ... 7869 հետևակ, 1000-ի չափ հեծյալ և 150 թնդանոթ ուղարկվեց Սասուն։ Ռուսական և պարսկական սահմանագլխից սկսած բոլոր գնդերը... դիմեցին դեպի Սասուն։ Միայն Բուլանըխից հայդարանցիները 300 հեծյալով եկան, որով կարելի է գաղափար կազմել, թե ինչպիսի մեծաքանակ ուժեր մեկ ակնթարթում շրջապատեցին Սասունը»[24]։ Սասունը շրջապատած քրդերի թիվը հասնում էր 43 հազարի։ Նրանց հետ էր 30 հազարանոց թուրքական բանակը։

Մայիսի սկզբներին Գևորգը լուր է ստանում, որ թուրքական մի զորամաս մտել է Խիանք և բռնություններ գործադրելով ձերբակալում է գյուղերի տանուտերերին և ազդեցիկ անձանց։ Նա իր խմբով անմիջապես սլանում է Իշխանաձոր։ Գեբինի լանջերին նրա դեմ է դուրս գալիս ոստիկանական մի ջոկատ, սակայն հանդիպելով հայդուկների շեշտակի հարվածին, զոհեր տալով փախուստի է դիմում։

Թիկունքում ունենալով Անդոկ և Գեբին անանցանելի լեռնաշխարհն ու անդնդախոր ձորերը, իսկ հարավ-արևմուտքում՝ Խուլբի և Խիանքի լավ կազմակերպված հայկական գյուղերը, ինքնապաշտպանության ղեկավարները որոշում են պաշտպանության գլխավոր գիծ դարձնել Տալվորիկ-Գելիգուզան առանցքը[25]։ Նման պայմաններում թուրքերի համար վճռական նշանակություն էր ստանում Տալվորիկ գետի վրայի Սատանի կամուրջը, որը հայերը քանդել էին։ Կառավարությունը, գրում է Հրայրը, «զարնան բացվելուն պես հատուկ արհեստավորներ ուղարկեց Սասնո սիրտն ու հոգին՝ Տալվորիկի Սատանի կամուրջը վերանորոգելու, որով սասունցին հասկացավ դրա օրհասական և անխուսափելի վտանգը»[26]։ Գևորգը հարձակվում է կամուրջը վերականգնող

21 Դրոշակ, 1907, № 8։
22 Հնչակ, 1894, № 1—2։
23 Դրոշակ, 1914, № 9—12։
24 Նույն տեղում, 1894, № 13։
25 Գլակ Տարոնցի, Ապստամբ Սասուն, ժնև, 1903, էջ 4—5։
26 Հնչակ, 1895, № 1։

թուրք զինվորների վրա ու նրանց փախուստի մատնում։ Ապա նա իր ջոկատով բարձրանում է Անդոկի փեշերը և այնտեղ շարունակում կռիվը թշնամու դեմ։ «1894 թ. հուլիսի 30-ին,— գրում է Գևորգը,— կռիվ սկսավ Սեմալի վերև Չայ ըսուած տեղը։ Առավոտյան արշալույսին հոն հավաքուած էին Շենիկ և Սեմալ գյուղերի բնակիչները, Գելիգուզանի ու Տալվորիկի օգնական խումբերը...»[27]։ Յոթ ժամ տևող ճակատամարտում թշնամին կորցրեց ավելի քան 200 մարդ։ Սասունցիները մեծ քանակությամբ ավար, այդ թվում հրացան ու փամփուշտ ձեռք գցեցին։ Սակայն թուրքական բանակը նոր ընդհանուր հարձակման անցավ։ «Օգոստոսի 1-ին,— գրում է Հրայրը,— այդ խառնիճիղանջ բազմությունը... սկսեց շարժվել դեպի Սասուն...»[28]։ Չեքի փաշան ձգտում էր հիմնովին կործանել Սասունը։ Նա զորքին ու քրդերին կարդաց սուլթանի ֆիրմանը, որ պահանջում էր անխնա կոտորել ապստամբ հայերին։ Զինվորները սկզբում վարանում էին, խուսափում էին խոշտանգումներին մասնակցելուց, բայց ընկրկելով սպաների սպառնալիքների առաջ, սկսեցին շարդել ու ավերել ամենայն անողոքությամբ։ Շատախի գյուղերից հեռացող ազգաբնակչության հետևից Չայ հասան թուրք ու քուրդ բազմահազար զորքերը։ Օգոստոսի 2-ին կեսօրվան մոտ Գրգոն ասաց. «Քաջ եղեք, պատվով մեռեք», և սկսվեց հայերի հարձակումը։ Հրացանի որոտն օդն էր թնդացնում, ծուխն ամպի պես պատել էր։ Սասնո լեռներից կարծես հրաբխային լավաներ էին ցայտում։ Վիրավորների դիաթավալ լինելը, սպանվողների հառաչանքը, կռվող երիտասարդության գոռում-գոչումը, կանանց ու աղջիկների խրախուսական ձայները պատել էին օդը։ Անդոկի գագաթից հասնում են Գելիգուզանի քաջ երիտասարդները և հայերն առաջ են շարժվում։ Քրդերի ու թուրքերի բազմությունը շփոթված փախուստի է դիմում, դաշտում թողնելով ավելի քան 800 դիակ։ Հայերից ընկնում են 20 երիտասարդ և 8 կին[29]։

Սասունցիները լավ էին հասկանում, որ այս անգամ թուրքական բանակը եկել է ոչ թե Սասունն ընկճելու, այլ ոչնչացնելու[30]։ Եվ վճռեցին կռվել մինչև վերջ։ «...թշնամու հետ մեր կռիվները,— գրում է Գևորգը,— երբեք չդադարեցին. կռիվը Չայում, կռիվ Անդոկում, նորից կռիվ Կալի գյուղում։ Չորրորդ կռվից հետո էր, որ վառվեց Գելիգուզան գյուղը։ Շենիկ, Սեմալ և մյուս գյուղերն արդեն վնասված էին։ Ժողովուրդն այլևս դիմադրելու անկարող էր, չկար որեէ օգնություն, չկար ռազմական ուժ, մենք էլ փոքրաթիվ էինք»[31]։

Հայկական գյուղերը մեկը մյուսի հետևից դատարկվում էին։ Հայերը հեռանում էին, իսկ թուրքերն ու քրդերը դրանք թալանելուց հետո հրդեհում էին։ Բաղեշի հիվանդանոցում պառկած թուրք զինվորներից մեկը պատմել է, որ ամենուրեք հայերը՝ զանգվածաբար կոտորվում էին։ Նրա վկայությամբ թուրքական հրամանատարության հանձնարարությամբ փոս էին փորում, ըսպանվածներին ու վիրավորներին լցնում մեջը և այրում։ «Այրում էին կենդանի մանուկներին և ձողերի վրա բարձրացնելով բղավում էին. «Անխելք հայեր, թե տղամարդ եք, եկեք, փրկեք ձեր մանուկներին»։ Յոթ տարեկան մի աղջիկ փախավ կրակից, տեսա ու խղճահարվեցի, փակեցի աչքերս ու հեռացա, գարշելով մեր արածից։ Բայց փաշան հրամայեց նորից կրակի մեջ գցել կիսամեռ աղջկան»։ Մի այլ տեղ զինվորները ղաղրխի էին բարձրացրել մի հայ գեղեցկուհու։ Նրա մարմինը մաս-մաս կտրում էին ու հայերին շպրտելով բղավում. «Հայեր, քաղցած եք, ահա ձեր սիրելի կանանց միսը, կերեք ու ողջ ասեք»[32]։

---

27 Ա վ ո, նշվ. աշխ., էջ 53։
28 Հնչակ, 1895, № 1։
29 Նույն տեղում։
30 Նույն տեղում։
31 Ա վ ո, նշվ. աշխ., էջ 63—64։
32 Դրոշակ, 1895, № 1։

Իսկ Անդոկի փեշերին հավաքված 21745 սասունցիները՝ հիմնականում ծերեր, կանայք ու մանուկներ, մինչև օգոստոսի 22-ը թշնամու բոլոր գրոհները ետ մղեցին։ Բայց երբ սովը սկսեց իր ավերածությունները, Գրգոն Անդոկի պաշտպանությունը թողեց կանանց ու տղամարդկանցից մի փոքր խմբի, իսկ ինքը մի քանի հոգով գնաց Խուլբից ու Խիանքից հաց ու ռազմամթերք բերելու։ Կանայք ևս 24 ժամ հերոսաբար դիմադրում են։ Գրկած փոքր երեխաներին, նրանք մարտնչում են նույնիսկ քարերով ու փայտերով ու հնձվում թշնամու կրակահերթերից։ Դիմադրելն այլևս անհնար էր դառնում։ «Այդ ժամանակ սկսվում է աննկարագրելի կոտորած, փախուստ, երեխաների ճիչն ու լացը երկինք է բարձրանում... Վերջապես նահանջող հայերը հասնում են Գեբրինի քարոտ գագաթը և տեսնում են, որ չորս կողմից պաշարված են»[33]։ Թշնամու ձեռքը չընկնելու համար Գրգոյի հարս Շաքեի օրինակով շատ կանայք ու աղջիկներ նետվեցին անդունդը. «... անմեղ ու դժբախտ երեխաներն իրենց մայրերի օրինակին հետևեցին, առանց գիտակցելու իրենց արածը...»[34]։

Անդոկը դեռ դիմադրում էր, երբ Գրգոն Գևորգի ջոկատին հանձնարարեց գնալ Տալվորիկ՝ օգնություն բերելու։ Սակայն Տալվորիկի վիճակը ևս ծանր էր։ Փամփուշտները սպառված էին, հայերի դիրքերն իրար հետևից անցնում էին թշնամու ձեռքը։ «Սասունի բոլոր կիրճերն ու ճանապարհները բռնված էին զորքերով ու քրդերով։ Այլևս դիմադրությունը շարունակելն անհնար էր...»[35]։ Օգոստոսի 15-ին թշնամին լցվեց Տալվորիկ։ Գյուղի պաշտպանության ղեկավարությունը Գևորգն իր ձեռքը վերցրեց և գրոհի էր տանում ոչ միայն իր ութ հոգանոց խմբին, այլև բոլոր պաշտպաններին[36]։ Դա Տալվորիկի վերջին կռիվն էր։ Երեկոյան Անդոկի գագաթներին թշնամու ուժեր երևացին։ Իսկ առանց Անդոկի Տալվորիկը պահելն անհնար էր։ Գյուղի պաշտպանները խումբ-խումբ դուրս եկան Տալվորիկից ու մթության մեջ հեռացան տարբեր ուղղություններով։

Սասունը կոտորվեց ու սկսվեց եղեռնը, որին զոհ գնաց 10 հազար սասունցի[37]։

Տալվորիկից վերջինը հեռացան Գասպարը, Գևորգը և Ադամը։ Նրանք շարժվեցին դեպի Զկնկուլի քարայրը։ Ճանապարհին նրանց միացավ Մուրադը։ Թշնամին, սակայն, մատնության շնորհիվ իմանալով թաքստոցի տեղը, շրջապատեց քարայրը[38]։ Գևորգը պատմում է. «Առանց ժամանակ կորցնելու թշնամին մեզ պաշարեց։ Կռիվը սկսվեց՝ մենք ներսից, նրանք դրսից։ Ամբողջ 24 ժամ օդի մեջ գնդակներ էին խաղում... Թշնամին իր հետ խոտ ու քարյուղ էր բերել, որպեսզի քարայրի առաջ վառի և մեզ մխով ու ծխով խեղդի։ Բերել էին նաև երկու թնդանոթ...»[39]։ Քարայրում ապաստանածները հարկադրված էին դուրս գալ ու անձնատուր լինել։ «Երբ զորքի մեջ մտանք,— հիշում է Գևորգը,— մեզ վրա սարսափելի հարձակում գործեցին, կողոպտեցին։ Քրդերը մեզ կապեցին ու ուղիղ բանակ առաջնորդեցին։ Այստեղ սկսեցին հրացան արձակել, ուրախանալ, յոթ անգամ էլ թնդանոթ պարպեցին... Հետո տարան եկեղեցի, կապեցին մեր ձեռքերը, ոտքերը և սկսեցին գազանաբար ծեծել ու չարչարել...

Երբ քննությունը վերջացավ, չորրորդ օրը մեզ Մուշ տարան»[40]։ Մուշում

---

33 Հնչակ, 1895, № 1։

34 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 206։

35 Դրոշակ, 1967, № 8։

36 Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, отдел II, с. 97—98.

37 Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 239.

38 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 209։

39 Այն, նշվ. աշխ., էջ 64։

40 Նույն տեղում, էջ 65։

ևս նրանց խոշտանգում են, ապա ուղարկում Բաղեշ։ Այստեղ նրանց դատեցին՝ Մուրադին 101, իսկ Գևորգին՝ 15 տարվա բանտարկության[41]։

Գևորգը Մշո Սվարի ղշլասի բանտում մնաց 20 ամիս։ Այստեղ նրան ենթարկեցին մարմնական ու հոգևոր ահավոր տանջանքների, բայց նա արիությամբ դրանք տարավ՝ ամբողջ ժամանակ մտածելով փախուստի մասին։ Նրա ամիսներ տևած ջանքերը հաջողությամբ պսակվեցին։ 1897 թ. ապրիլի 20-ին Գևորգը քանդեց բանտախցի պատուհանը, ցած սողաց և, օգտվելով անձրևոտ եղանակից ու մթությունից, հեռացավ քաղաքից։ Նրա օրինակին հետևեցին ևս երկու հայդուկներ։

Բանտից դուրս գալուց հետո միայն նա իմացավ այն ահավոր ողբերգության մասին, որ տարել էր արևմտահայությունը 1894 թ. վերջերից մինչև 1896 թ. կեսերը։ 300 հազար արևմտահայ՝ տղամարդ, կին, երեխա, ծեր, ենթարկվելով անասելի խոշտանգումների, զոհ էին գնացել օսմանյան յաթաղանին[42]։

Գևորգ Չաուշը որոշ ժամանակ մնաց Տալվորիկում։ «Անդրանիկն էլ եկել էր,— պատմում է Գևորգը,— ու մեր մոտ մնաց մինչև գարուն։ Գարնան սկզբին Սերոբն ու Գուրգենը իրենց խմբով եկան Սասուն»[43]։

Գևորգի և Սերոբի ղեկավարած հայդուկային խմբերի միավորումը կատարվեց նույն տարվա աշնանը։ «Հոկտեմբերին ես, Գուրգենը և երեք ընկերներ,—գրում է Գևորգը,—գնացինք Կոփ գյուղ։ Սերոբն էլ իր խմբով այնտեղ եկավ և Անդրանիկը մի ընկերոջ հետ Դաշտից վերադարձավ։ Մեր թիվը հասավ 17-ի»[44]։

Սակայն Գևորգի ու Սերոբի համագործակցությունը երկար չտևեց։ Գևորգ-Սերոբ և Անդրանիկ-Սերոբ հարաբերություններում շուտով երևան եկան, եթե ոչ հակասություններ, ապա սառնություն։ Հետևանքը լինում է այն, որ Անդրանիկը հեռացվում է Սերոբի խմբից, իսկ Գևորգը մի դժբախտ ու դաժան դիպվածով (երբ աղջիկ փախցնելու համար Սերոբի հարկադրանքի տակ ապանում է իր հորեղբորն ու նրա կնոջը) ինքն է հեռանում Սերոբի խմբից[45]։

(Շարունակելի)

---

41 Братская помощь пострадавшим в Турции армянам, отдел II, с. 32.

42 Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, с. 229.

43 Ավ ո, նշվ. աշխ., էջ 97։

44 Նույն տեղում։

45 Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 273—274։